

ՓՈԽԱՐԺԵՔԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Օրեցօր խորացող ինտեգրացիոն գործընթացները, որոնք սկսվել են անցյալ դարի առաջին կեսերից, առավել սերտորեն են կապում առանձին երկրների տնտեսությունները: Ահա այսպիսի սերտ կապերի մաս է կազմում մաս երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների ավելացումը: Ապրանքների ու ծառայությունների լայնամասշտաբ շարժը մի կողմից և ռեսուրսների միջազգային շարժը մյուս կողմից առանձին երկրների համար ի հայտ են բերում ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Կփորձենք դիտարկել մակրոտնտեսական փոխկապվածության միայն մեկ հանգույցը՝ փոխարժեքի, որպես միջազգային վճարային հարաբերությունների կարևորագույն օղակի և առևտրային հաշվեկշռի, որպես երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների կարևորագույն ձևի փոխկապվածության հիմնահարցը և տալ դրա տեսագործական մեկնումը: Փոխարժեքի և առևտրային հաշվեկշռի փոխկապվածության վերաբերյալ քննարկումները, վերլուծությունները և տեսական ու գործնական հիմնավորումներն սկսվել են դեռևս անցած դարի առաջին կեսերից, իսկ առավել խորացել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Խնդիրն առավել քննարկելի դարձավ Բրետտոն-Վուդսյան համակարգի փլուզումից հետո, երբ ուժի մեջ մտավ լողացող արժույթային փոխարժեքի ռեժիմը՝ դրանով իսկ առավել նշանակալի ու տեսանելի դարձնելով փոխարժեքի փոփոխման ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա:

Կարևորագույն խնդիրը ձևակերպվում է այսպես. փոխարժեքի փոփոխությունն ինչպե՞ս է ազդում երկրի առևտրային հաշվեկշռի վրա, և ի՞նչ քաղաքականություն պետք է իրականացնել, եթե ոչ մակրոտնտեսական գերակշիռ դերի կամ հավասարակշռության հասնելու, ապա դրան առավելագույնս մոտենալու համար: Այս հարցերի պատասխանները տնտեսագետները տալիս են մինչ օրս: Կան մշակված տեսություններ և առավել լոկալ բնույթի մոդելներ: Այս հարցին վերաբերող տեսությունները կարելի է բաժանել երեք խոշոր խմբի, որոնք ունեն կառուցվածքային և մոտեցման նշանակալի տարբերություններ՝ առաձգականության մոտեցում, կլանման մոտեցում և մոնետարիստական մոտեցում:

Առաձգականության մոտեցում. տեսության հիմքերն առաջադրվել են Բիկերդիկի (Bickerdike) - 1920թ., Ռոբինսոնի (Robinson) - 1947թ. և Մեցլերի (Metzler) - 1948թ. կողմից, իսկ առավել ընդհանրացվել է Կրեյգերի (Kreuger) - 1983թ. կողմից¹: Մոդելը սկզբնապես հայտնի էր որպես BRM մոդել: Այս մոդելի զարգացման ուղղությամբ հիմնական գործունեություն են ծավալել Ալֆրեդ Մարշալը (Alfred Marshall) - 1923թ. և Աբբա Լեռները (Abba Lerner) - 1944²: Մոդելում տրվում է արժույթային փոխարժեքի փոփոխման ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա՝ հիմնվելով արտահանվող և ներմուծվող ապրանքների առաջարկի և պահանջարկի գնային առաձգականությունների վրա: Մոդելում գլխավոր շեշտը դրվում է պահանջարկի առաձգականության վրա, իսկ ներքին ու արտաքին գները համարվում են հաստատուն, ուստի պահանջարկի փոփոխությունը չի կարող ազդել գնի վրա, և ապրանքների հարաբերական գների

¹ Bickerdike, C. (1920) The Instability of Foreign Exchange. The Economic Journal, 30, No 17, 118-122. Robinson, J. (1947) The Foreign Exchanges, in Ellis, H. and Metzler, L. (eds.) Readings in the Theory of International Trade, Allen and Unwin, Philadelphia. Metzler, L. (1948) The Theory of International Trade, in Ellis H. (eds.) A Survey of Contemporary Economics, I, Blakiston, Philadelphia. Kreuger, A. (1983) Exchange Rate Determination, Cambridge University Press.

² Marshall, A (1923) Money, Credit and Commerce. London, Macmillan. Lerner, A (1944) The Economics of Control: Principles of Welfare Economics. The Macmillan Company, N.Y.

փոփոխությունը կարող է պայմանավորված լինել միայն անվանական փոխարժեքի փոփոխմամբ: Մոդելը բացահայտում է, որ երբ արտաքին առևտուրը սկզբնապես հավասարակշռված է, ապա ազգային արժույթի արժեզրկումը առևտրային հաշվեկշիռը դարձնում է ավելցուկային, երբ արտահանման նկատմամբ արտասահմանյան պահանջարկի և ներմուծման նկատմամբ ներքին պահանջարկի առաձգականությունների գումարը մեծ է մեկից: Վերջինս ընդունված է անվանել Մարշալ-Լերներ պայման: Իսկ եթե Մարշալ-Լերներ պայմանը չի գործում, ապա տեղի է ունենում հակառակ գործընթացը. ազգային արժույթի արժեզրկումը առևտրային հաշվեկշիռը դարձնում է պակասուրդային: Պետք է նշել, որ առևտրային հաշվեկշռի և փոխարժեքի փոխկապվածության ուսումնասիրությունների գերակշիռ մեծամասնության հիմքում ընկած է հենց Մարշալ-Լերներ պայմանը: Այս մոդելի հետ կապված կատարվել են բազմաթիվ էմպիրիկ հետազոտություններ, որոնց միջոցով պարզվել է, որ Մարշալ-Լերներ պայմանը գործում է փոխարժեքի փոփոխումից 2-3 տարի հետո, որն ընթանում է երկու, իրար հակադիր, գնի և ծավալի էֆեկտների միջոցով: Փոխարժեքի տատանումից հետո առաջին հերթին ի հայտ է գալիս գնի էֆեկտը (փոխարժեքի արժեզրկման դեպքում արտահանման գները նվազում են, հետևաբար արտահանող երկրի համար առևտրի պայմանները վատանում են, և որպես հետևանք առևտրային հաշվեկշիռը դառնում է պակասուրդային, և հակառակը), հետագայում արդեն 2-3 տարի հետո ի հայտ է գալիս ծավալի դրական էֆեկտը՝ արտաքին շուկաներում ազգային արտադրանքի գնի փոփոխությամբ պայմանավորված պահանջարկի, այն է՝ արտահանման ծավալների ընդլայնմամբ կամ պակասեցմամբ, որն էլ բերում է առևտրային հաշվեկշռի փոփոխություն (մասնավորապես, ազգային արժույթի արժեզրկման դեպքում ազգային արտադրանքն արտաքին շուկաների համար դառնում է ավելի էժան, և հետևաբար ավելանում է դրանց նկատմամբ պահանջարկը, հետևաբար ավելանում է նաև երկրի արտահանումը, որն էլ իր հերթին բերում է առևտրային հաշվեկշռի բարելավման): Ծավալի դրական էֆեկտի հետաձգված գործողությունը բացատրվում է նրանով, որ հարաբերական գների փոփոխման դեպքում անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված, որպեսզի թե՛ ներքին, թե՛ արտաքին սպառողները, ինչպես նաև ներքին արտադրողները հարմարվեն նոր պայմաններին և համապատասխան որոշումներ կայացնեն հետագա արտադրության և սպառման համար: Այս երկու էֆեկտների հետևանքով ստացվում է J-կորը՝ ժամանակի ընթացքում առևտրային հաշվեկշռի փոփոխություն, որը սկզբում ընդունում է առավել բացասական արժեքներ գնի բացասական էֆեկտի շնորհիվ, իսկ հետագայում սկսում է շարժվել դեպի դրական սալդո՝ ծավալի դրական էֆեկտի շնորհիվ: Որոշ տարբերություն ունի Կենենի, Պետերի և Պաքի (Kenen, Peter and Clare Pack)¹ – 1980թ. կողմից ներկայացված եզրահանգումն այն մասին, որ Բրետտոն-Վուդսյան համակարգից հետո առևտրի մեջ մտնող ապրանքների պահանջարկը զգալի է փոխարժեքի տատանումների նկատմամբ, և այս մոտեցման մեջ հեղինակները շեշտը դնում են անվանական և իրական փոխարժեքների վրա՝ նշելով, որ երբ և՛ անվանական փոխարժեքը, և՛ ներքին շուկայի գները ճկուն են, իրական փոխարժեքի փոփոխությունը չի կարող ազդել առևտրային հաշվեկշռի վրա այնպես, որ վերացնի դրա անհավասարակշռությունը, փոփոխություններ պետք է լինեն նաև ամբողջական պահանջարկի հետ, որպեսզի փոխարժեքի փոփոխությունը կարողանա լուրջ ազդեցություն ունենալ առևտրային հաշվեկշռի վրա:

Այլաման մոտեցումը ձևավորվել է 1950-ականներին՝ Հարբերգերի (Harberger) – 1950թ., Մեադի (Meade) – 1951թ. և Ալեքսանդրի (Alexander) - 1952թ., 1959թ. կողմից²: Մոտեցման հիմնա-

¹ Kenen, Peter and Carle Pack (1980), Exchange Rates, Domestic Prices, and the Adjustment process, Group of 30 Occasional Papers 1.

² Harberger, A. (1950) Currency Depreciation, Income, and the Balance of Trade. Journal of Political Economy, 58, 1, 47- 60. Meade, J. (1951) The Balance of Payments, Oxford University Press, Oxford. Alexander, S. (1952) Effects of devaluation on a trade balance, IMF Staff Papers, 2, 263- 78. Alexander, S (1959) Effects of Devaluation: A Simplified Synthesis of Elasticities and Absorption Approaches. American Economic Review, 49, 21 – 42.

կան գաղափարն այն է, որ փոխարժեքի փոփոխության ազդեցությունն առևտրային հաշվեկշռի վրա դրսևորվում է մակրոտնտեսական հիմնական կապերի միջոցով, որոնք դուրս են մնում առաձգականությունների հիման վրա կատարվող վերլուծության ժամանակ: Հեղինակների կողմից ներկայացվում է նոր՝ կլանման փոփոխականը, որը սպառողական ծախսերի, ներդրումների և պետական գնումների համագումար (առևտրային հաշվեկշիռը հավասար է ազգային եկամտի և կլանման տարբերությանը) է, և նշում են, որ առևտրային հաշվեկշիռը կբարելավվի միայն այն ժամանակ, երբ ազգային եկամտի հավելաճը գերազանցի կլանման հավելաճին: Ըստ մոդելի պայմանների, որպեսզի առևտրային հաշվեկշիռը բարելավվի, անհրաժեշտ է, որ ազգային եկամտի՝ սպառման նպատակով չօգտագործվող մասի հավելաճը գերազանցի ուղղակի կլանման հավելաճին: Կլանման մոտեցման հիմնական գաղափարն այն է, որ արժույթի արժեզրկումը կնվազեցնի առևտրային հաշվեկշռի պակասորդը միայն այն ժամանակ, երբ ուղեկցվի եկամտի աճին նպաստող ու կլանումը զսպող տնտեսական քաղաքականությամբ:

Մոնետարիստական մոտեցումը, որի հեղինակներն են Մանդելը (Mundell) – 1971թ., Դորնբուշը (Dornbusch) – 1973թ., Ֆրենկելը (Frenkel) և Ռոդրիգեսը (Rodrigues) – 1975թ.¹, հիմնվում է վճարային հաշվեկշռի՝ որպես բացարձակ մոնետար ֆեռմենտի վրա: Այն է՝ վճարային հաշվեկշռի դեֆիցիտը հետևանք է ապրանքների, ծառայությունների և ակտիվների նկատմամբ ավելցուկային պահանջարկի: Մոտեցման հեղինակները նշում են, որ ազգային արժույթի արժեզրկումը նվազեցնում է փողի իրական առաջարկը՝ դրանով իսկ լավացնելով վճարային հաշվեկշիռը և հետևաբար մաս առևտրային հաշվեկշիռը:

Չնայած այս երեք խոշոր տեսությունների, ինչպես նաև հզոր վիճակագրական նյութի առկայությանը, այսօր կան բազմաթիվ հակասական կարծիքներ մակրոտնտեսական այս խնդրի շուրջ: Որոշ հեղինակներ նշում են J-կորի նշանակության թուլությունը: Գրինվուդ (Greenwood) – 1984թ., Ռոս և Յելեն (Rose and Yellen) – 1989թ., Մահդավի և Սոհրաբիան (Mahdavi and Sohrabian) – 1993թ., Վիլսոն (Wilson) – 2001թ., Վիլսոն և Թատ (Wilson and Tat) – 2001թ.² և այլք, ոմանք էլ հակված են դեպի երկարաժամկետ J-կորի գոյությանն ու նշանակությանը: Բահմանի-Օսկուի (Bahmani-Oskooee) – 2001թ., Բոյդ (Boyd) – 2001թ., Բրահմասրեն (Brahmasrene) – 2002թ.³ և այլք: Խնդրի կարևորության պատճառով շատ են հետազոտվել ասիական երկրները՝ Մալազիա, Ինդոնեզիա, Թաիլանդ, Ֆիլիպիններ, Սինգապուր: Վերջիններիս՝ Ճապոնիայի հետ առևտրին տնտեսագետները յուրահատուկ ուշադրություն են դարձրել: Օնաֆավորա (Onafawora) – 2003թ., Լեու, Լիմ և Հուսսին (Liew, Lim and Hussain) – 2003թ.⁴ և այլք: Ճապոնիան որպես առևտրային գործընկեր շատ լուրջ հետաքրքրություն է ներկայացնում նաև ԱՄՆ-ի համար, դրա մասին վկայում է Բահմանի (Rahman)⁵ – 1997թ. ուսումնասիրությունը:

¹ Mundell, R. (1971), Monetary Theory, Pacific Palisades, Goodyear. Dornbusch, R. (1973) Devaluation, Money and Non-traded goods, American Economic Review, 63, 871- 80. Frenkel, J., and Rodriguez, C. (1975) Portfolio Equilibrium and the Balance of Payments: a Monetary Approach, American Economic Review, 65, 674 – 88.

² Greenwood, J. (1984) Non-traded Goods, the Trade Balance, and the Balance of Payments, Canadian Journal of Economics, 17, 4, 806-23. Rose, A and Yellen, J. (1989) Is There a J-Curve? Journal of Monetary Economics, 24, 53–68. Mahdavi, S. and Sohrabian, A. (1993) The Exchange Value of the Dollar and the US Trade Balance: an Empirical Investigation Based on Cointegration and Granger causality tests, Quarterly Review of Economics and Finance, 33, 4, 343–58. Wilson, P (2001), Exchange Rates and the Trade Balance for Dynamic Asian Economies—Does the J-Curve Exist for Singapore, Malaysia, and Korea? Open Economies Review, 12, 389–413. Wilson, P and Tat, K. (2001), Exchange Rates and the Trade Balance: the Case of Singapore 1970 to 1961, Journal of Asian Economics, 12, 47–63.

³ Bahmani-Oskooee, M. (2001) Nominal and Real Effective Exchange Rates of Middle Eastern Countries and their Trade Performance. Applied Economics, 33, 103-111. Boyd, D. et al (2001) Real Exchange Rate Effects on the Balance of Trade: Cointegration and the Marshall–Lerner Condition. International Journal of Finance and Economics, 6, 187–200. Brahmasrene, T. (2002) Exploring Real Exchange Rate Effects on Trade Balances in Thailand. Managerial Finance, 28, 11.16-27.

⁴ Onafowora, O. (2003) Exchange Rate and Trade Balance in East Asia: is there a J-curve? Economics Bulletin, 5, 18, 1-13. Khim-Sen Liew, Kian-Ping Lim and Huzaimi Hussain (2003) Exchange Rate and Trade Balance Relationship: the Experience of ASEAN Countries, WP 0307003, 5-7.

⁵ Rahman, M. et al. (1997), Dynamics of the Yen-Dollar Real Exchange Rate and the USD Japan Real Trade Balance. Applied Economics, 29, 661- 664.

ները, որոնք ուղղված են ճապոնական իենի և դոլարի փոխարժեքի տատանումների ազդեցությանը այդ երկու գործընկեր երկրների առևտրային հաշվեկշիռների վրա: ԱՄՆ դոլարի փոխարժեքի և ԱՄՆ առևտրային հաշվեկշիռի փոխկապվածության վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից Գուստի, Քրիստոփորի և Շիթի (Gust, Christopher and Nathan Sheets)¹ - 2006 կողմից կատարված ուսումնասիրության մեջ նշվում է, որ դոլարի 10% արժեզրկումը ավելացնում է ԱՄՆ-ի առևտրային հաշվեկշիռը դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի մոտ 1%-ով:

Իհարկե, խնդրի դիտարկման ժամանակ պետք է անպայման ուշադրություն դարձնել երկրի զարգացածության աստիճանին, նրա արժույթի կայունության, ինչպես նաև արտաքին տնտեսական հարաբերություններում ներգրավվածության աստիճանին: Այս համատեքստում բավական շատ հետազոտություններ են կատարված զարգացած և զարգացող երկրների համար, սակայն քիչ են հետազոտություններն անցումային տնտեսությամբ երկրների համար: Վերջիններից կարելի է նշել Տիհոմիր Ստուչկային (Tihomir Stucka) – 2003թ., ով վերլուծել է փոխարժեքի ազդեցությունը Խորվաթիայի առևտրային հաշվեկշիռի վրա և Իրինա Տոչիտսկայային (Irina Tochitskaya) – 2006թ.², ով դիտարկել է հարցի վերլուծումը Բելառուսի օրինակով:

Հիմնվելով նշված տեսությունների վրա՝ կարևոր է պարզել՝ արդյոք Հայաստանի տնտեսության համար գործում է փոխարժեքի և առևտրային հաշվեկշիռի փոխկապվածությունը և ինչ տեսք ունի այն: Այսինքն՝ հանգում ենք առաջնահերթ կերպով J-կորի դուրսերման խնդրին: Մինչ կորի էմպիրիկ դուրսերումը պետք է նշել, որ ՀՀ-ում 1993-1996թթ. Կենտրոնական բանկն իրականացնում էր փոխարժեքի կարգավորվող քաղաքականություն, իսկ 1996 թվականից սկսեց իրականացնել ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն՝ դրան նպատակադրելով գնաճի կարգավորման քաղաքականությունը: Մինչև 2003թ. ՀՀ տնտեսությունում առկա էին ազգային արժույթի արժեզրկում և ցածր գնաճ, որի հետևանքով արժեզրկվում էր նաև իրական արդյունավետ փոխարժեքը, իսկ 2003 թվականից հետո սկսվեց ազգային դրամի ինչպես անվանական, այնպես էլ իրական արդյունավետ փոխարժեքի արժևորում: Հետևաբար մինչև 2003թ. փոխարժեքի արժեզրկումը պետք է բարելավեր առևտրային հաշվեկշիռը, իսկ 2003 թվականից հետո փոխարժեքի արժևորմանը զուգընթաց առևտրային հաշվեկշիռը պետք է միտվեր դեպի ավելի բացասական սալդո:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ՀՀ առևտրային հաշվեկշիռը դրսևորել է մնան պահվածք. մինչև 1998թ. առևտրային հաշվեկշիռն ունեցել է բացասական սալդոյի ավելացում (որը, սակայն, բացառապես կապված է տնտեսության ծայրահեղ լարված վիճակի հետ, այլ ոչ թե փոխարժեքի փոփոխությունների): 1998 թվականից փոխարժեքի արժեզրկմամբ պայմանավորված առևտրային հաշվեկշիռի բացասական սալդոն սկսել է նվազել մինչև 2003թ., որից հետո նկատելի կերպով ՀՀ առևտրային հաշվեկշիռը վատացել է: Ինչպես կարելի է տեսնել, արդեն 2008թ. միայն 10 ամիսների համար առևտրային հաշվեկշիռի բացասական սալդոն հասել է այնպիսի ցուցանիշի, որքան չի եղել անցած 15 տարիների ընթացքում: Հարկ է ավելացնել, որ նշված բացասական սալդոյի ավելացման հիմքում ընկած է ներմուծման բավական արագ տեմպերով աճը, որը գերազանցում է արտահանման աճին 2-3 անգամ:

¹ Gust, Christopher and Nathan Sheets (2006), The Adjustment of Global External Imbalances: Does partial Exchange Rate Pass-Through to Trade Prices Matter?, International Finance Discussion Papers number 850.

² Stucka, T (2003) The Impact of Exchange Rate Changes on the Trade Balance in Croatia, Croatian National Bank, Working Papers, 11. Irina Tochitskaya (2006), The Effect of Exchange Rate Changes on Belarus' Trade Balance, IPM Research Center, 4.

ՀՀ արտաքին առևտուրը (մլն ԱՄՆ դոլար)¹

Տարի	Արտաքին առևտրի ընդհանուր ցուցանիշը	Փոխադրվող ընդհանուր արտադրանք	Փոխադրվող տնտեսական արտադրանք	Արտահանման ծավալը	Փոխադրվող ընդհանուր արտադրանք	Փոխադրվող տնտեսական արտադրանք	Ներմուծման ծավալը	Փոխադրվող ընդհանուր արտադրանք	Փոխադրվող տնտեսական արտադրանք	Տեսակարար կշիռը %-ով		Առևտրային հաշվեկշիռի պակասությունը
										Արտահանում	Ներմուծում	
1993	410.4			156.2			254.2			38.1	61.9	-98
1994	609.3	198.9	48	215.5	59.3	38	393.8	139.6	55	35.4	64.6	-178.3
1995	931.9	322.6	53	263.4	47.9	22	668.5	274.7	70	28.3	71.7	-405.1
1996	1146.1	214.2	23	290.3	26.9	10	855.8	187.3	28	25.5	74.5	-565.5
1997	1124.8	-21.3	-2	232.5	-57.8	-20	892.3	36.5	4	20.7	79.3	-659.8
1998	1122.9	-1.9	0	220.5	-12	-5	902.4	10.1	1	20	80	-681.9
1999	1043	-79.9	-7	231.7	11.2	5	811.3	-91.1	-10	22.6	77.4	-579.6
2000	1185.6	142.6	14	300.5	68.8	30	885.1	73.8	9	25.2	74.8	-584.6
2001	1219.2	33.6	3	341.8	41.3	14	877.4	-7.7	-1	28.2	71.8	-535.6
2002	1492.3	273.1	22	505.2	163.4	48	987.1	109.7	13	33.9	66.1	-481.9
2003	1964.8	472.5	32	685.6	180.4	36	1279.2	292.1	30	35	65	-593.6
2004	2073.6	108.8	6	722.9	37.3	5	1350.7	71.5	6	34	66	-627.8
2005	2775.6	702	34	973.9	251	35	1801.7	451	33	34.9	65.1	-827.8
2006	3176.7	401.1	14	985.1	11.2	1	2191.6	389.9	22	31.0	69.0	-1207
2007	4420.1	1243.4	39	1152.3	167.2	17	3267.8	1076.2	49	26.1	73.9	-2116
2008 հունվար- հոկտեմբեր	4520.4	100.3	2	941.2	-211.1	-18	3579.2	311.4	10	20.8	79.2	-2638

Ի դեպ, պետք է նշել, որ ՀՀ ԱՎԾ կողմից ՀՀ առևտրային հաշվեկշիռը ներկայացված է ԱՄՆ դոլարի միավորներով, ուստի որպես ազգային արժույթի փոխարժեք կոնտրակտները դրամ/դոլար անվանական փոխարժեքը:

Աղյուսակ 2-ից պարզ երևում են ազգային դրամի արժեզրկումն ու արժևորումը, ի դեպ ամենաարժեզրկված ժամանակահատվածը ազգային դրամի համար եղել է 2003թ. մարտին՝ դրամ/դոլար – 590.4, իսկ ամենաարժևորված ժամանակահատվածը 2008թ. օգոստոս ամսվա ընթացքում՝ դրամ/դոլար – 301.96:

Դիտարկելով փոխարժեքի տատանումների և առևտրային հաշվեկշիռի գրաֆիկները (գծապատկեր 1)¹ կնկատենք, որ 1995 թվականից սկսում է նկարագրվել J- կորի սկզբնական մասը, սակայն քանի որ ազգային դրամի արժեզրկումը 2003 թվականից կանգ է առնում և սկսում է՝ արժևորումը, ապա 2003 թվականից ականատես ենք լինում շրջված J-կորի:

¹ ՀՀ ԱՎԾ տվյալներ – www.armstat.am.

**ՀՀ ԿԸ կողմից սահմանված 1 ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքները
(ժամանակահատվածի միջինը)¹**


	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Հումվար	405.94	402.01	452.09	497.1	535.62	527.01	553.43	564.08	583.03	568.44	491.68	451.74	363.71	306.83
Փետրվար	405.27	402.65	466.63	499.1	543.27	527.9	552.15	565.28	586.37	564.35	473.39	450.11	355.98	308.72
Մարտ	404.02	403.35	477.73	502.07	537.15	527.47	545.97	572.1	590.4	562.89	466.01	451	358.63	308.61
Ապրիլ	408.13	405.47	482.19	502.63	535.46	530.88	547.81	578.31	588.11	556.86	447.89	449.99	363.33	309.04
Մայիս	408.86	406.71	492.32	503.09	538.8	534.14	553.77	580.81	585.96	552.66	449.25	439.73	353.77	307.36
Հունիս	409.41	409.2	511.41	502.95	545.34	543.65	555.11	580.67	585.2	543.9	448.95	420.63	344.8	304.93
Հուլիս	407.82	413.25	504.32	501.73	542.82	548.09	554.05	565.69	579.55	525.94	442.63	417.4	338.35	302.4
Օգոստոս	409.16	418.5	502.12	501.81	540.35	540.49	554.58	558.46	578.14	517.63	460.99	401.87	336.94	301.96
Սեպտեմբեր	406.88	413.96	501.1	506.38	534.18	539.79	554.07	564.47	574.77	513.39	454.42	387.89	338.2	302.55
Հոկտեմբեր	400.09	416.29	500.63	508.27	520.72	544.97	560.78	581.51	563.86	506.39	449.41	381.32	330.28	306.19
Նոյեմբեր	402.35	431.08	499.89	515.14	523.26	555.46	564.66	584.27	564.55	502.71	458.27	376.16	316.85	305.21
Դեկտեմբեր	402.66	438.8	498.83	518.37	523.77	554.45	564.55	584.59	565.26	486.26	449.36	364.64	304.1	307.83
Ժամանակահատվածի միջինը	405.88	413.44	490.77	504.89	535.06	539.53	555.08	573.35	578.77	533.45	457.69	416.04	342.08	305.96
%-ային փոփոխությունը		1.86	18.70	2.88	5.98	0.83	2.88	3.29	0.94	-7.83	-14.20	-9.10	-17.78	-10.55

Համադրելով դոլար/դրամ անվանական փոխարժեքը (հաշվի առնելով, որ ՀՀ-ում արտաքին ապրանքաշրջանառությունը կատարվում է մեծամասամբ ԱՄՆ դոլարով, ինչպես նաև չմոռանալով, որ ՀՀ-ում տնտեսության դոլարայնացման մակարդակը շատ բարձր է, դոլար/դրամ փոխարժեքի դիտարկումը մեզ տալիս է ընդհանուր պատկերը ազգային դրամի փոխարժեքի մասին) և առևտրային հաշվեկշիռը՝ գալիս ենք այն եզրակացության, որ ՀՀ-ում J-կորի էֆեկտն ի հայտ է գալիս ոչ թե 2-3, այլ 5-6 տարվա ընթացքում, որը պայմանավորված է փոքր երկրին բնորոշ առանձնահատկությամբ, սակայն ՀՀ-ում նկատում ենք շրջված J-կորի էֆեկտ, քանի որ վերջին 5 տարիների ընթացքում ազգային դրամը դրսևորում է կայուն արժևորում:

Ընդհանրացնելով պետք է նշել, որ արժութային փոխարժեք և առևտրային հաշվեկշիռ կապն ունի նկատելի արտահայտված փոխկապվածություն և երկրի, որպես արտաքին գործընկերոջ, միջազգային առևտրային և տնտեսական դիրքերի պահպանումը պետք է համընդհանուր արժութային քաղաքականության կարևորագույն օղակներից մեկը: Վերջինս նշանակում է ուշադրության կենտրոնում պահել ազգային արժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով արտահանող ընկերությունների կորուստները և պետական մակարդակով աջակցել դրանց նվազեցմանը, ինչն իր հերթին կնպաստի նրան, որ արտահանող ընկերությունների մոտ հասույթի ստացման և ծախսերի իրականացման գործընթացը կընթանա առավել արդյունավետ և չի ազդի արտադրանքի որակի և առավել ևս այսօր առավել կարևոր մրցակցային առավելություն հանդիսացող գնի վրա:

¹ ՀՀ ԱՎԾ տվյալներ – www.armstat.am.

Դրամ/դոլար անվանական փոխարժեքը և ՀՀ առևտրային հաշվեկշիռը (մլն դոլար) 1995-2008
հոկտեմբեր ժամանակահատվածում



ԳՈՐԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
 տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հարկաբյուջետային քաղաքականության վերջին մի քանի տարիների փորձը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման ծրագրում նախանշված որոշ ցուցանիշներ շատ դեպքերում չեն կատարվում՝ իրենց վրա կրելով այս քաղաքականության ոլորտում և տնտեսության մեջ ձևավորված անհամամասնությունների ազդեցությունը: Չարգացած և որոշ զարգացող երկրներում ֆիսկալ սկզբունքները դիտարկվում են որպես միջնաժամկետ, շատ դեպքերում նաև որպես երկարաժամկետ նպատակ: Նման միջնաժամկետ նպատակներ են դրվում նաև ՀՀ-ում հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների համար, ինչպիսիք են դեֆիցիտ/ՀՆԱ, պարտք/ՀՆԱ ցուցանիշները: Բազմաթիվ երկրներ կիրառում են ֆիսկալ քաղաքականության տարբեր